ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«13» սեպտեմբերի 2011թ. № 69-Ա/1

ՀՐԱՄԱՆ

<ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ> ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 12-րդ կետի <դ> ենթակետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշման 3-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել <Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույցը> /այսուհետ՝ մեթոդական ուղեցույց/ համաձայն հավելվածի:

2. Նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ Լ. Ղազարյանին՝ ապահովել <Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարության հանձնաժողովների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույցի> տրամադրումը խնամակալության և հոգաբարձության մարմիններին:

Ա. Գրիգորյան

Հավելված
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2011թ. սեպտեմբերի 13-ի թիվ հրամանի
№ 69-Ա

Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույց

1. Խնամակալության և հոգաբարձության գործունեության նպատակը

1. Խնամակալության և հոգաբարձության գործունեության նպատակը երեխաների, ինչպես նաև սահմանափակ գործունակ ճանաչված անձանց իրավունքների և շահերի պաշտպանությունն է:

2. Համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետի Խնամակալության և հոգաբարձության մարմինները տեղական ինքնակառավարման մարմիններն են, իսկ Երևանում քաղաքապետի անունից խնամակալության և հոգաբարձության մարմիններին վերապահված լիազորություններն իրականացնում են Երևանի վարչական շրջանների ղեկավարները:

3. Խնամակալության և հոգաբարձության մարմիններն իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով, <Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով>, <Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին> ՀՀ օրենքով, <Երեխայի իրավունքների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:

4. Խնամակալության և հոգաբարձության մարմիններն իրենց իրավասությունների շրջանակներում համագործակցում են մարզպետարանների, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի, համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմինների, սոցիալական ծառայության տարածքային մարմինների, բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների, ուսումնական հաստատությունների, առողջապահական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային մարմինների, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների հետ:

5. Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվում են Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ:

6 Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը (5-9-ը անձ) հաստատելու մասին որոշումը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշմամբ հանձնաժողովի անհատական կազմից ընտրվում են նաև հանձնաժողովի նախագահ և հանձնաժողովի քարտուղար:

7. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը գործում է հասարակական հիմունքներով՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

8. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել մարզպետարանների աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների, սոցիալական ծառայության տարածքային մարմինների աշխատողներ, համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայողներ, համայնքի մանկավարժներ, հոգեբաններ, սոցիալական աշխատողներ և իրավաբաններ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (համաձայնությամբ):

9. Խնամակալության և հոգաբարձության մարմինները երեխաների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության, իրավական ակտերի և փաստաթղթերի վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցների վերաբերյալ խորհրդատվություն, տեղեկատվություն և աջակցություն ստանում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից: Խնամակալության և հոգաբարձության մարմիններն անհրաժեշտ խորհրդատվություն, աջակցություն և տեղեկատվություն են ստանում նաև մարզպետարանից, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանից:

10. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներն իրենց գործունեությունը կազմակերպում և իրականացնում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված աշխատանքային տարեկան ծրագրերով:

11. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը գործում է իր կողմից հաստատված աշխատակարգին համապատասխան:

12. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության / ոչ ուշ քան երեք ամիսը մեկ/ հաշվի առնելով առկա դիմումների քանակը և խնդիրների հրատապությունը: Հրատապ լուծում պահանջող հարցերի դեպքում հանձնաժողովի անդամների կամ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ հրավիրվում է արտահերթ նիստ:

Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի քարտուղարը վարում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի գործավարությունը, փաստաթղթաշրջանառությունը: Կազմակերպում է տունայցեր, և արդյունքների մասին եզրակացությունը ներկայացնում է հանձնաժողովի քննարկմանը: Մշակում է երեխայի խնդիրների հետ կապված համայնքի ղեկավարի որոշման նախագիծ, որը ներկայացնում է համայնքի ղեկավարի հաստատմանը: Արձանագրում է հանձնաժողովի նիստերը:

2. **Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, երեխայի ծննդյան փաստի օրենքով սահմանված կարգով չգրանցման, ինչպես նաև երեխաների մահացության, համայնքում երեխաների թրաֆիքինգի դեպքերի բացահայտումը**

13. Համաձայն <Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ <Առանց ծնողական խնամքի մնացած երեխա է համարվում 18 տարին չլրացած այն երեխան, որի ծնողները (կամ միակ ծնողը) մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափում են երեխաների

դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են>:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք են համարվում 18-23 տարեկան այն անձինք, որոնց ծնողները (կամ միակ ծնողը) մինչև նրանց 18 տարին լրանալը մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափել են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են:

14. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը բացահայտում է՝

1) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և այն չափահաս անձանց մասին տեղեկությունները, ովքեր ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

2) ծնողների, ծնողական խնամքի բացակայության, ծնողական խնամքից զրկվելու այլ դեպքերը ,

3) համայնքում երեխայի ծննդյան փաստի օրենքով սահմանված կարգով չգրանցման, ինչպես նաև երեխաների մահացության, համայնքում՝ երեխաների թրաֆիքինգի դեպքերը:

15. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, համայնքում՝ երեխայի ծննդյան փաստի օրենքով սահմանված կարգով չգրանցման ինչպես նաև երեխաների մահացության, համայնքում՝ երեխաների թրաֆիքինգի դեպքերի բացահայտման աշխատանքները իրականացվում են խնամակալության և հոգաբարձության մարմնի, ոստիկանության, առողջապահական հաստատությունների, Քաղաքացիական կացության ակտերի գրանցման և սոցիալական պաշտպանություն իրականացնող այլ կառույցների օգնությամբ: Դատական, քրեակատարողական մարմիններն ևս կարող են տեղեկությունների տրամադրման աղբյուր լինել, քանի որ ծնողների ձերբակալության, բանտարկության դեպքերում նրանք տեղյակ են միայնակ մնացած երեխաների մասին և պարտավոր են այդ մասին իրազեկել խնամակալության և հոգաբարձության մարմիններին: Սոցիալական ծառայությունները ևս, սահմանված դեպքերում երեխային նշանակում են կերակրողին կորցնելու կենսաթոշակ, և նմանատիպ դեպքերի ժամանակ պարտավոր են տեղեկացնել խնամակալության և հոգաբարձության մարմնին: Խնամակալության և հոգաբարձության մարմինների ուշադրության կենտրոնում պետք է լինեն նաև այն ընտանիքները, ծնողների առկայության պարագայում բացահայտվել է երեխայի անտեսման փաստը:

16. Այն դեպքերում, երբ ծնողները չարաշահում են իրենց իրավունքները և երեխաների կյանքին և առողջությանը վտանգ է սպառնում, անհրաժեշտ են կտրուկ քայլեր՝ երեխաներին անվտանգ միջավայր տեղափոխելու համար: Խնամակալության և հոգաբարձության մարմինը պետք է համագործակցի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի, հասարակական կազմակերպությունների և բոլոր շահագրգիռ կողմերի հետ, անհրաժեշտության դիմի դատարան ծնողներին՝ ծնողական իրավունքներից զրկելու կամ իրավունքները սահմանափակելու համար:

17. Խնամակալության և հոգաբարձության մարմինը 14-րդ կետում սահմանված դեպքերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալուց հետո երեք օրվա ընթացքում պարտավոր է անցկացնել երեխայի /ընտանիքի/ կյանքի պայմանների հետազոտություն: Համայնքում երեխայի ծննդյան փաստի օրենքով սահմանված կարգով չգրանցման, ինչպես նաև երեխաների մահացության, համայնքում երեխաների թրաֆիքինգի դեպքերում տեղեկացնել համապատասխան մարմիններին, իսկ երեխայի ծնողների կամ ազգականների կողմից խնամքի փաստի բացակայությունը բացահայտելիս ապահովել երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունը մինչև նրա տեղավորման հարցի լուծումը :

18. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամներից կազմված խումբը իրականացնում է տունայց՝ երեխայի և նրա ընտանիքի /առկայության դեպքում/ կյանքի պայմանների ուսումնասիրություն՝ համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2007թվականի դեկտեմբերի 4-ի N 163-Ն և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 4-ի N 1180-Ն <Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սոցիալական կարիքների գնահատման կարգը հաստատելու մասին> համատեղ հրամանի:

3.Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հաշվառումը

19. Համաձայն ՀՀ Կառավարության 2003 թվականի հունիսի 22-ի N 962-Ն որոշման՝ Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց սկզբնական հաշվառումը եւ դրա համար անհրաժեշտ փաստաթղթերի կազմումն իրականացնում է երեխայի փաստացի գտնվելու վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմինը:

20. Դաստիարակչական, բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության եւ նմանատիպ այլ հաստատությունների ղեկավարները, որտեղ գտնվում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ, պարտավոր են 7 օրվա ընթացքում, այն օրից, երբ տեղեկություն են ստացել, որ երեխան կարող է հանձնվել ընտանիք՝ դաստիարակության, հայտնել այդ հաստատության գտնվելու վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմին:

21. Խնամակալության եւ հոգաբարձության մարմինը՝ տեղեկանալով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին, պարտավոր է եռօրյա ժամկետում հետազոտել երեխայի կենսապայմանները եւ ծնողական խնամքի բացակայության փաստը հաստատվելու դեպքում երեխայի մասին տվյալները գրանցել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սկզբնական հաշվառման մատյանում /համաձայն վերը նշված կարգով հաստատված ձևի/:

22. Սկզբնական հաշվառման վերցնելուց հետո 3 օրվա ընթացքում երեխայի փաստացի գտնվելու վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմինը լրացնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի անձնական քարտը, որի պատճենը եւ երեխայի լուսանկարը՝2 օրինակից, ուղարկում է մարզպետարան (Երեւանի քաղաքապետարան)՝ երեխային տարածքային հաշվառման վերցնելու համար:

23. Խնամակալության եւ հոգաբարձության մարմինը մարզպետարան (Երեւանի քաղաքապետարան) է ուղարկում նաեւ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց անձնական քարտերը /համաձայն 2003 թվականի հուլիսի 23-ի N 917-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին> N 962-Ն որոշմամբ հաստատված ձևի/ :

24. Խնամակալության եւ հոգաբարձության մարմինն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավական կարգավիճակի փոփոխման դեպքում (ծնողի (ծնողների) ծնողական իրավունքների վերականգնման, երեխայի որդեգրման եւ այլն) 3-օրյա ժամկետում դրա մասին տեղեկացնում է մարզպետարան (Երեւանի քաղաքապետարան):

25. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների եւ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց մասին խնամակալության եւ հոգաբարձության մարմնից տեղեկություն ստանալուց հետո մարզպետարանը (Երեւանի քաղաքապետարանը) 3 օրվա ընթացքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների եւ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց լուսանկարները եւ անձնական քարտերի պատճեններն ուղարկում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ երեխաներին կենտրոնացված հաշվառման վերցնելու եւ Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտանիքներում դաստիարակության հանձնելուն աջակցելու, ինչպես նաեւ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սոցիալական երաշխիքներն ապահովելու համար:

4. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տեղավորումը

26. Համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 111-րդ հոդվածի առանց ծնողական խնամքի մնացած երեխաները ենթակա են հանձնման ընտանիք /որդեգրման/, խնամակալության /հոգաբարձության/ կամ խնամատար ընտանիք, իսկ նման հնարավորության բացակայության դեպքում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար բոլոր տիպի կազմակերպություններ /դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններ/: Սակայն մինչ նշված կազմակերպություններում տեղավորելը երեխաների խնամակալի /հոգաբարձուի/ պարտականությունների կատարումը ժամանակավորապես դրվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի վրա:

27. Երեխայի տեղավորման ձևի ընտրության հարցում պետք է հնարավորինս ապահովել երեխայի՝ ընտանիքում խնամվելու և դաստիարակվելու իրավունքը, նախապատվությունը տալով խնամքի ընտանեկան պայմաններին մոտ ձևերին. մասնավորապես խնամակալությանը և խնամատարությանը: Եթե չկան այդ հնարավորությունները, ապա դիտարկվում է երեխային խնամակալական հաստատություն տեղավորելու հնարավորությունը:

5.Խնամակալությունը և հոգաբարձությունը երեխաների նկատմամբ

28. Համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի խնամակալություն սահմանվում է այն երեխաների նկատմամբ, ովքեր մնացել են առանց ծնողական խնամքի՝ նրանց պահելու, դաստիարակելու և կրթություն տալու, ինչպես նաև նրանց իրավունքները և շահերը պաշտպանելու նպատակներով:

29. Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի խնամակալություն է սահմանվում տասնչորս տարին չլրացած անչափահասների, ինչպես նաև հոգեկան խանգարման հետևանքով անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ, իսկ հոգաբարձություն սահմանվում է 14-18 տարեկան անչափահասների, ինչպես նաև սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ:

30. Խնամակալության և հոգաբարձության մարմինը, մինչ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը, հանձնաժողովի միջոցով կազմակերպում է երեխայի դաստիարակությանը հավակնող անձի (անձանց) կենսապայմանների հետազոտություն, ինչի հիման վրա սահմանում է խնամակալ կամ հոգաբարձու: Խնամակալ կամ հոգաբարձու նշանակելու համար անհրաժեշտ է կատարել փաստաթղթային ուսումնասիրություններ, տունայցեր, հարցազրույցներ:

31. Երեխաների խնամակալներ /հոգաբարձուներ/ կարող են նշանակվել միայն չափահաս գործունակ անձինք՝ իրենց համաձայնությամբ: Խնամակալ նշանակելիս հաշվի են առնում խնամակալի /հոգաբարձուի/ բարոյական և անձնական հատկանիշներ, խնամակալի /հոգաբարձուի/ պարտականությունները կատարելու նրա ունակությունները, խնամակալի և երեխայի փոխհարաբերությունները, երեխայի նկատմամբ խնամակալի /հոգաբարձուի/ ընտանիքի անդամների վերաբերմունքը, ինչպես նաև երեխայի ցանկությունը, եթե դա հնարավոր է:

32. Խնամակալություն սահմանելիս հաշվի են առնում, որ խնամակալն ունենա երեխային խնամելու և դաստիարակելու համար անհրաժեշտ պայմաններ: Այդ պայմանների բացակայության դեպքում խնամակալությունն անթույլատրելի է:

33. Խնամակալները կարող են լինել երեխայի մերձավոր ազգականները, ինչպես նաև երեխայի հետ ազգակցական կապ չունեցող անձինք: Եթե երեխայի ազգականները ցանկանում են դառնալ խնամակալ, ապա նախապատվությունը տրվում է ազգականներին, բացառությամբ այն դեպքերի, երբ այն բխում է երեխայի շահերից: Մանկատներում գտնվող երեխաների խնամակալը հանդիսանում է հաստատության տնօրինությունը, սակայն այս դեպքերում էլ հաստատությունը պետք է ամեն ինչ անի, որպեսզի երեխան հնարավորինս կարճ ժամանակով գտնվի հաստատությունում: Այդ ընթացքում հաստատությունը պետք է բավարար հիմքեր ապահովի երեխայի հետագա խնամքը և դաստիարակությունը ընտանիքում կազմակերպելու համար: Իսկ այն դեպքերում, երբ մանկատուն տեղավորված երեխան ունենում է անշարժ գույք՝ խնամակալության և հոգաբարձության մարմինը նշանակում է նրա գույքի նկատմամբ կառավարիչ:

34. Խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշման հիման վրա խնամակալին կամ հոգաբարձուին տրվում է սահմանված նմուշի համապատասխան վկայագիր՝ լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով և ձևանմուշին համապատասխան:

35. Խնամակալի կամ հոգաբարձուի իրավունքները և պարտականությունները ծագում են որոշման ընդունման պահից: Անչափահաս

քաղաքացիների խնամակալները և հոգաբարձուները պարտավոր են իրենց խնամարկյալների հետ ապրել համատեղ: Տասնվեց տարին լրացած խնամարկյալներից հոգաբարձուի առանձին ապրելը թույլատրում է խնամակալության և հոգաբարձության մարմինը, եթե դա անբարենպաստ չի անդրադառնում խնամարկյալի դաստիարակության, նրա իրավունքների և շահերի պաշտպանության վրա: Խնամակալները և հոգաբարձուները պարտավոր են խնամակալության ու հոգաբարձության մարմիններին տեղեկացնել իրենց բնակության վայրը փոփոխելու մասին:

6.Խնամակալների և հոգաբարձուների իրավունքներն ու պարտականությունները

36. Խնամակալներն ու հոգաբարձուները պարտավոր են և իրավունք ունեն դաստիարակել երեխային, հոգ տանել նրա առողջության, ֆիզիկական, հոգեբանական, հոգևոր և արժեքային համակարգի զարգացման համար: Խնամակալն իրավունք ունի ընտրելու երեխայի համար նախադպրոցական, հանրակրթական և այլ տիպի հաստատություններ /երաժշտական, սպորտային, լրացուցիչ կրթության և այլն/: Խնամակալը հանդիսանում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանը ցանկացած ատյանում, այդ թվում և դատարանում: Միայն օրենքով սահմանված դեպքերում հոգաբարձուն իրավունք ունի հանդես գալ իր խնամարկյալի անունից:

37.Խնամակալ ճանաչված անձն իրավունք ունի պահանջել երեխային այն անձանցից, ում մոտ երեխան գտնվում է առանց օրինական հիմքերի, բացառությամբ այն դեպքերի, երբ երեխան արդեն 16 տարեկան է և խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվությամբ կարող է առանձին ապրել: Կախված երեխայի տարիքից, խնամակալը պետք է ապահովի տարիքին համապատասխան սնունդը, խնամքը, սանիտարահիգիենիկ պայմանները և կրթությունը: Նման հարցերում խնամակալները կրում են նույնքան պատասխանատվություն, որքան ծնողները: Խնամակալության և հոգաբարձության մարմինը պետք է պարբերաբար կատարի իր կողմից խնամակալություն նշանակած երեխաների կենսապայմանների ուսումնասիրություն /տարեկան երկու անգամ/:

38. Այցելությունները ընտանիք պետք է ունենան կոնկրետ նպատակ: Այցից առաջ պետք է ունենալ նախապես մշակված հարցաշար: Ցանկալի է, որպեսզի ընտանիքում չտեսնեն հարցաշարը, դա կարող է լարվածություն ստեղծել: Հարցաշարն անհրաժեշտ է մասնագետին, որպեսզի նախապես մշակված ուղղությամբ հավաքի անհրաժեշտ տեղեկատվություն, մասնավորապես երեխայի և ընտանիքի մյուս անդամների փոխհարաբերությունների, երեխայի առողջական վիճակի, ընտանիքի սոցիալ-տնտեսական իրավիճակի, երեխայի կրթական մակարդակի, վարքի, առաջադիմության և այլնի մասին:

7. Ովքեր չեն կարող նշանակվել խնամակալներ և հոգաբարձուներ

39. Խնամակալ /հոգաբարձու/ չեն կարող նշանակվել Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի մայիսի 5-ի թիվ 517-Ն որոշմամբ

հաստատված ցանկում նշված հիվանդություններով հիվանդ անձինք, կյանքի և առողջության նկատմամբ դիտավորյալ հանցագործություն կատարած անձինք, խնամակալների /հոգաբարձուների/ պարտականություններից հեռացված անձինք, ծնողական իրավունքներից զրկված անձինք, ծնողական սահմանափակ իրավունքներով անձինք, նախկին որդեգրողները, եթե որդեգրումը վերացվել է նրանց մեղքով, ինչպես նաև այն անձինք, ովքեր առողջական վիճակի պատճառով չեն կարող իրականացնել երեխայի դաստիարակության պարտականությունը: Խնամակալ /հոգաբարձու/ չեն նշանակվում նաև պետության լրիվ խնամքի տակ գտնվող երեխաների նկատմամբ:

40. Խնամակալության և հոգաբարձության մարմինը հսկողություն է իրականացնում խնամակալների ու հոգաբարձուների գործունեության նկատմամբ. խնամակալության և հոգաբարձության մարմինը խնամակալների և հոգաբարձուների գործողությունների կամ անգործության վերահսկումը իրականացնելու համար պետք է տիրապետի համայնքում խնամակալության և հոգաբարձության ներքո գտնվող բոլոր անձանց մասին տեղեկատվությանը: Այդ տեղեկությունները պետք է լինեն համակարգված. անհրաժեշտ է ունենալ մատյաններ, որտեղ գրանցված կլինեն նրանց տվյալները /անուն, ազգանուն, հասցե, հեռախոս, որոշման ժամանակը և այլն/: Մատյանում պետք է առանձին սյունակ հատկացնել նաև տեղեկությունների ստացման ժամանակահատվածին:

41. Խնամակալության և հոգաբարձության մարմինը հանձնաժողովի միջոցով աջակցում է խնամակալներին և հոգաբարձուներին խնամարկյալների խնամքի և դաստիարակության, նրանց հանգիստը կազմակերպելու գործում, քննության է առնում խնամակալների և հոգաբարձուների գործողությունների կամ անգործության մասին դիմումներն ու բողոքները, լուծում են ծնողների միջև երեխայի անվան, ազգանվան վերաբերյալ համաձայնության բացակայության հետևանքով առաջացած տարաձայնությունները:

8. Խնամակալություն կամ հոգաբարձություն նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը

42.Առանց ծնողական խնամքի մնացած ցանկացած երեխայի մասին տվյալները պետք է լրացվեն և գրանցվեն խնամակալության և հոգաբարձության սկզբնական հաշվառման մատյանում: Յուրաքանչյուր երեխայի համար բացվում է առանձին գործ:

Խնամակալություն և հոգաբարձություն սահմանելու նպատակով իրականացվող փաստաթղթային ուսումնասիրությունների իրականացման համար անհրաժեշտ է, հավաքագրել հետևյալ փաստաթղթերը.

1) Դիմում խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելու մասին,
2) Խնամակալի կամ հոգաբարձուի թեկնածուի անձը հաստատող փաստաթղթի պատճենը
3) Տեղեկանք խնամակալի կամ հոգաբարձուի թեկնածուի առողջական վիճակի մասին /համաձայն ՀՀ Կառավարության 2005 թ. մայիսի 5-ի թիվ 517-Ն որոշման/

4) Տեղեկանք խնամակալի կամ հոգաբարձուի թեկնածուի փաստացի բնակության վայրի մասին, եթե անձնագրում հաշվառումը չի համապատասխանում փաստացի բնակության վայրին:
5) Տեղեկանք խնամակալի կամ հոգաբարձուի թեկնածուի ընտանիքի անդամների համաձայնության մասին խնամակալության կամ հոգաբարձության վերաբերյալ:
6) Երեխային խնամքի և դաստիարակության համար խնամակալի կամ հոգաբարձուի ընտանիք հանձնելու իրավական հիմքերը հաստատող փաստաթղթեր՝ ծնողների ժամանակավոր բացակայության վերաբերյալ փաստաթուղթ, ծնողների (կամ միակ ծնողի) մահվան վկայականների պատճենները կամ ծնողական իրավունքներից զրկելու, կամ ծնողին անգործունակ ճանաչելու, կամ ծնողին անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու փաստը հաստատող դատական ակտի պատճենները, երեխայի ընկեցիկությունը հաստատող փաստաթուղթ (ակտ):
7) Տեղեկանք երեխայի բնակության վայրի մասին:
8) Տեղեկանք Երեխայի կրթական հաստատության մասին (դպրոցական տարիքի երեխաների համար):
9) Տեղեկանք եղբայրների և քույրերի և նրանց գտնվելու վայրի մասին (առկայության դեպքում):
10) Տեղեկանք Խնամակալի կամ հոգաբարձուի թեկնածուի աշխատավայրի մասին /աշխատանքի առկայության դեպքում/:
11) Երեխայի գույքի ցուցակագրման մասին ակտ, անշարժ գույքի առկայության մասին փաստաթուղթ /եթե առանց ծնողական խնամքի մնացած երեխա է/:
12) Երեխայի համաձայնությունը խնամակալության մասին /10 տարեկանից բարձրի դեպքում/:
13) Երեխայի և խնամակալի կարիքների գնահատման թերթիկ:

43. Անձնական գործը պարբերաբար լրացվում է տունայցերի թերթիկներով կամ ակտերով, բժշկական հետազոտման փաստաթղթերով, խնամարկյալի հետ կապված ցանկացած որոշման փաստաթղթերով:

44. Երեխայի անձնական գործի համարը պետք համընկնի հաշվառման մատյանի հերթական համարին: Հաշվառման մատյանում լրացվում են խնամակալության կամ հոգաբարձության տրված երեխաների տվյալները: Խնամակալության և հոգաբարձության հետ կապված բոլոր փաստաթղթերի վարումն իրականացնում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի քարտուղարը:

9. Երեխային խնամատար ընտանիք տեղավորելը

45.Խնամատար ընտանիքը առանց ծնողական խնամքի մնացած երեխայի դաստիարակության համար տեղավորման ձևերից մեկն է:

46.Խնամատար ընտանիք դաստիարակության և խնամքի համար հանձնվում է առանց ծնողական խնամքի մնացած /այդ թվում դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններում գտնվող/ երեխան:

47. Խնամատար ծնողների ընտրությունն իրականացնում են խնամակալության և հոգաբարձության մարմինները մարզպետարանի հետ համատեղ՝ հաշվի առնելով խնամատար ծնող թեկնածուի բարոյական և անձնական այլ հատկանիշները, նրանց և երեխայի փոխհարաբերությունները, երեխայի նկատմամբ խնամակալի ընտանիքի անդամների վերաբերմունքը, ինչպես նաև երեխայի ցանկությունը, եթե դա հնարավոր է:

48. Խնամատար ծնող լինելու հնարավորության մասին դրական եզրակացություն ստացած անձը դաստիարակության և խնամքի համար խնամատար ընտանիք տեղավորման ենթակա երեխայի մասին տեղեկատվություն ստանալու համար դիմում է իր բնակության վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմին կամ մարզպետարան (Երեւանի քաղաքապետարան) կամ Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն:

49. Երեխային իր բնակության (գտնվելու) վայրում այցելելու ուղեգիրը տալիս է երեխայի բնակության վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմինը: Խնամատար ծնող լինելու հնարավորության մասին դրական եզրակացություն ստացած անձը, ընտրված երեխային դաստիարակության համար խնամատար ընտանիքում տեղավորման մասին դիմումը ներկայացնում է երեխայի բնակության (գտնվելու) վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմին, որը դիմումը ստանալուց հետո ոչ ուշ, քան 5-օրյա ժամկետում խնամատար ընտանիք դաստիարակության հանձնվող երեխայի մասին տեղեկություն ստանալու համար հարցում է ուղարկում երեխայի խնամքն իրականացնող համապատասխան դաստիարակչական, բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպության ղեկավարին կամ այն անձին, որի մոտ գտնվում է երեխան:

50.Երեխայի խնամքն իրականացնող համապատասխան դաստիարակչական, բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպության ղեկավարը (կամ անձը, որի մոտ գտնվում է երեխան) հարցումը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում երեխայի բնակության (գտնվելու) վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմին է ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝

1) երեխայի ծննդյան վկայականը.

2)երեխային դաստիարակության համար խնամատար ընտանիք հանձնելու իրավական հիմքերը հաստատող փաստաթղթեր՝ ծնողների (կամ միակ ծնողի) մահվան վկայականների պատճենները կամ ծնողական իրավունքներից զրկելու, կամ ծնողին անգործունակ ճանաչելու, կամ ծնողին անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու փաստը հաստատող դատական ակտի պատճենները, երեխայի ընկեցիկությունը հաստատող փաստաթուղթ (ակտ).

3) երեխայի առողջական վիճակի, մտավոր եւ ֆիզիկական զարգացման մասին համապատասխան եզրակացություն՝ տրված բժշկական հաստատության կողմից.

4) քաղվածք երեխայի զարգացման պատմությունից (նորածնի պատմությունից) նրա առողջական վիճակի մասին.

5) երեխայի կրթության մասին փաստաթուղթ (դպրոցական տարիքի երեխաների համար).

6) տեղեկանք եղբայրների և քույրերի գոյության եւ գտնվելու վայրի մասին

(առկայության դեպքում).

7) երեխային պատկանող գույքի անվանացանկը և դրա պահպանման համար պատասխանատու անձանց մասին տեղեկություններ (առկայության դեպքում).

8) անշարժ գույքի նկատմամբ երեխայի սեփականության կամ օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում).

9) ալիմենտ բռնագանձելու մասին դատական ակտի պատճենը (առկայության դեպքում).

10) փաստաթղթեր, որոնք հաստատում են երեխայի կենսաթոշակ ստանալու իրավունքը, կենսաթոշակ ստացող երեխայի կենսաթոշակի գրքույկը, բանկում երեխայի անվամբ բացված հաշվի առկայության մասին փաստաթուղթը (առկայության դեպքում):

51. Ընտրված երեխային խնամատար ընտանիք դաստիարակության հանձնելու մասին որոշումն ընդունում է երեխայի բնակության (գտնվելու) վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմինը՝ վերը նշված փաստաթղթերը ստանալուց հետո 3-օրյա ժամկետում: Երեխային խնամատար ընտանիք դաստիարակության հանձնելու մասին որոշումը եւ սահմանված փաստաթղթերը երեխայի բնակության (գտնվելու) վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինն անձին է տրամադրում երեխային խնամատար ընտանիք դաստիարակության հանձնելու մասին որոշման ընդունման պահից 3-օրյա ժամկետում: Երեխային խնամատար ընտանիք հանձնելու մասին պայմանագիրը կնքվում է խնամատար ծնողի բնակության վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմնի ու խնամատար ծնողների միջև՝ երեխային խնամատար ընտանիք դաստիարակության հանձնելու մասին որոշման հիման վրա:

52.Խնամատար ծնողները պարտավոր են՝

1) դաստիարակել երեխային փոխադարձ հարգանքի հիման վրա՝ կազմակերպելով երեխայի կենցաղը և ազատ ժամանցը

2) ստեղծել անհրաժեշտ պայմաններ երեխայի կրթություն ստանալու համար, հոգ տանել նրա առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին

3) իրականացնել երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունը

4) ապահովել երեխայի խնամքը և բուժումը, պարբերաբար երեխայի բժշկական զննումը՝ համապատասխան բժիշկ-մասնագետների կողմից

5) ապահովել երեխայի հաճախումը հանրակրթական հաստատություններ, հետևել նրա առաջադիմությանը, կապ պահպանել այդ հաստատության ուսուցիչների և դաստիարակների հետ: Երեխայի առողջական վիճակի պատճառով հանրակրթական հաստատություններ հաճախելու անհնարինության դեպքում նրա կրթությունն ապահովել տնային պայմաններում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով

6) տալ գրավոր համաձայնություն խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչների կողմից խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով.

7) խնամակալության և հոգաբարձության մարմնին տեղեկացնել ընտանիքում երեխայի ապրելակերպի, դաստիարակության և կրթության անբարենպաստ պայմանների առաջացման մասին.

8) երեխային պահելու համար ամսական վճարվող դրամական միջոցներն օգտագործել նպատակային կերպով՝ բացառապես երեխայի ապրուստը հոգալու, երեխային պահելու համար անհրաժեշտ անձնական հիգիենայի պարագաների, կենցաղային իրերի, հագուստի, կոշիկի, անկողնային պարագաների, սնունդի, խաղալիքների, խաղերի, գրքերի և այլ գրենական պիտույքների ու կահույքի ձեռքբերման, ջեռուցման, լուսավորության, ջրմուղ-կոյուղու և այլ կոմունալ ծառայությունների դիմաց վճարման համար:

53.Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը պարտավոր է՝

1) խնամատար ծնողների վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության, առողջության, կրթության, ապրելակերպի, կենցաղային պայմանների ուսումնասիրության և երեխայի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության ապահովման նպատակով պարբերաբար այցելել խնամատար ընտանիք.

2) խնամատար ընտանիքում երեխայի ապրելակերպի, դաստիարակության և կրթության անբարենպաստ պայմանների, երեխայի իրավունքների և օրինական շահերի ոտնահարման դեպքում ձեռնարկել համապատասխան միջոցներ, ընդհուպ մինչև պայմանագրի լուծումը.

3) անհրաժեշտության դեպքում խնամատար ընտանիքին ցուցաբերել օգնություն, նպաստել երեխայի կյանքի ու դաստիարակության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:

54. Խնամակալության և հոգաբարձության մարմինը իրավունք ունի

1) երեխայի խնամքի և դաստիարակության իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով, առանց խնամատար ծնողներին նախապես զգուշացնելու, օրվա ցանկացած ժամին այցելելո խնամատար ընտանիք.

2) խնամատար ծնողների կողմից երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության, խնամքի և դաստիարակության իրականացման համար նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում նախազգուշացնել խնամատար ծնողներին՝ սահմանելով մինչև 2 ամիս ժամկետ, իսկ սահմանված ժամկետում խախտումները չվերացնելու դեպքում լուծել պայմանագիրը.

3) խնամատար ընտանիքում երեխային պահելու, դաստիարակելու և կրթության համար անբարենպաստ պայմաններ առաջանալու կամ երեխային ծնողներին վերադարձնելու, կամ երեխային որդեգրելու դեպքերում լուծել պայմանագիրը:

10. Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեությունը դատարանում /ծնողներին ծնողական իրավունքից զրկելու կամ նրանց իրավունքները սահմանափակելու գործընթացը/

55. Երեխայի իրավունքների ու շահերի խախտման, երեխայի կյանքին և առողջությանը վտանգ սպառնալու, ծնողների կամ նրանցից մեկի կողմից երեխային դաստիարակելու, կրթության տալու պարտականության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, կամ երեխայի դաստիարակությունից և խնամքից,

նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու կամ ծնողական իրավունքների չարաշահման դեպքերում խնամակալության և հոգաբարձության մարմինն իրականացնում է երեխաների իրավունքների ու շահերի պաշտպանություն:

56. Համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի երեխայի կյանքին կամ առողջությանն անմիջական վտանգ սպառնալու դեպքում՝ ծնողների կամ ընտանիքի անդամների կողմից երեխայի հանդեպ ֆիզիկական, սեռական, հոգեբանական բռնության, չարամտորեն երեխայի խնամքն իրականացնելուց խուսափելու դեպքերում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը իրավասու է երեխային վերցնել ծնողներից կամ խնամակալից, անհապաղ ապահովել երեխայի ժամանակավոր տեղավորումը /խնամակալություն, ընտանիքի աջակցության կենտրոն կամ խնամատար ընտանիք/:

57. Խնամակալության և հոգաբարձության մարմինը 7-օրյա ժամկետում դիմում է դատարան՝ ծնողներին (նրանցից մեկին) ծնողական իրավունքներից զրկելու /իսկ խնամակալության կամ հոգաբարձության դեպքում այն վերացնելու/ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով;

58. Խնամակալության և հոգաբարձության մարմինն իրավասու է դիմել դատարան 14-18 տարեկան անչափահասի՝ իր աշխատավարձը, կրթաթոշակը կամ այլ եկամուտներն ինքնուրույն տնօրինելու իրավունքը սահմանափակելու միջնորդությամբ:

59. Խնամակալության և հոգաբարձության մարմինը մասնակցում է դատարանում երեխաների որդեգրման հաստատմանը և որդեգրման վերացմանը վերաբերող գործերի քննությանը, երեխայից առանձին ապրող ծնողի ծնողական իրավունքների իրականացման հարցում ծագած կամ երեխայի դաստիարակության հետ կապված վեճերը քննող դատական նիստերին, դատարանում ծնողական իրավունքների վերականգնման քննությանը, ծնողական իրավունքների սահմանափակման կամ զրկման մասին գործերի քննությանը, դատարանում 16 տարեկան դարձած անչափահասին լրիվ գործունակ (էմանսիպացված) ճանաչելու մասին գործերի քննմանը՝ օրենքով սահմանված դեպքերում, անչափահասների շահերի պաշտպանության նպատակով ժառանգության բաժանման վերաբերյալ համաձայնությունը կազմելուն կամ ժառանգությունը բաժանելու վերաբերյալ գործի դատաքննությանը, քրեական վարույթում որպես օրինական ներկայացուցիչ չունեցող անչափահաս տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչ:

60. Խնամակալության և հոգաբարձության մարմինը կնքում է գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր իրենց կողմից նշանակված կառավարչի հետ՝ խնամարկյալի անշարժ և արժեքավոր շարժական գույքի մշտական կառավարման անհրաժեշտության դեպքում:

61. Կարող են անհայտ բացակայող ճանաչված անձի գույքի մշտական կառավարման անհրաժեշտության դեպքում նշանակել այդ գույքի կառավարիչ և նրա հետ կնքել հավատարմագրային կառավարման պայմանագիր, ինչպես նաև կառավարչի նշանակման օրվանից 3 տարի անցնելուց հետո դիմել դատարան՝ անձին մահացած ճանաչելու համար, եթե անձին անհայտ բացակայող ճանաչելու մասին դատարանի վճիռը չի վերացվել:

62. Թույլատրում է խնամակալին կնքել, իսկ հոգաբարձուին՝ համաձայնություն տալ կնքելու խնամարկյալի գույքի օտարման՝ ներառյալ փոխանակության կամ նվիրատվության, վարձակալության, այդ գույքն անհատույց օգտագործման հանձնելու կամ գրավ դնելու գործարքներ, որոնք հանգեցնում են խնամարկյալին պատկանող

գույքի նկատմամբ իրավունքներից հրաժարվելուն, ինչպես նաև նրա գույքը բաժանելուն կամ դրանից բաժիններ առանձնացնելուն, խնամարկյալի գույքի նվազեցմանը հանգեցնող ցանկացած այլ գործարքների, հոգաբարձուին՝ 16 տարին լրացած խնամարկյալից առանձին ապրել, եթե դա բացասաբար չի անդրադառնա խնամարկյալի դաստիարակության, նրա իրավունքների և շահերի պաշտպանության վրա, սահմանված կարգով ծնողական սահմանափակված իրավունքներով ծնողներին երեխայի հետ շփումը, եթե դա երեխայի վրա բացասական ազդեցություն չի ունենա:

63. Կարող են պարտավորեցնել ծնողներին կամ ծնողին՝ նրանցից մեկի մերժման դեպքում չխանգարելու պապերի, տատերի, եղբայրների, քույրերի և այլ մերձավոր ազգականների հետ երեխայի շփումը:

11. Խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից քաղաքացուն օգնական (պատրոն) նշանակելը

64. Խնամակալության և հոգաբարձության մարմինը նշանակում է քաղաքացու օգնական (պատրոն)՝ քաղաքացու համաձայնությամբ չափահաս գործունակ քաղաքացու խնդրանքով, որը վատառողջ լինելու պատճառով չի կարող ինքնուրույն իրականացնել ու պաշտպանել իր իրավունքները և կատարել պարտականությունները: Սահմանված պատրոնաժը դադարում է օրենքով նախատեսված դեպքերում:

65.Պատրոնի նշանակումը սոցիալական սպասարկման տեսակ է տնային պայմաններում, որը արտահայտվում է մշտական սոցիալական հսկողությամբ: Պատրոնի պարտականություններն են չափահաս գործունակ քաղաքացու բնակարան մշտական այցելությունը, նրան անհրաժեշտ օգնության ցուցաբերումը, որոշակի մանր ծառայությունների կատարումը՝ օրինակ, մթերքներ գնելը, ուտելիք պատրաստելը, բնակարանը մաքրելը, կոմունալ վճարումների կատարումը, փոստային առաքումները, այլ տնային աշխատանքները, անհրաժեշտ ու տնից դուրս կատարվող այլ գործողությունները, ոչ բարդ բուժգործողությունների կատարումը: Պատրոնաժը հատկապես կարևոր է հաշմանդամների և միայնակ տարեցների նկատմամբ, քանի որ վերջիններս մեծամասաբ զրկված են մտերիմների օգնությունից, ունեն ինքնասպասարկման սահմանափակումներ: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը պետք է տեղյակ լինի, թե որ բնակիչը կարիք ունի պատրոնի և նախաձեռնի նրա նշանակումը, քանի որ հաճախ բնակիչները տեղյակ չեն այդպիսի հնարավորության մասին: Նման բնակիչների մասին տեղեկություններ կարելի է ստանալ համայնքային այլ կազմակերպությունների և կառույցների օգնությամբ: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը վերահսկում է պատրոնի գործունեությունը, նրա գործունեության մասին պարբերաբար տեղեկություն է ստանում քաղաքացուց, որի նկատմամբ պատրոնաժ է սահմանվել:

12. Խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ քրեական վարույթում որպես օրինական ներկայացուցիչ չունեցող անչափահաս տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչ /համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի/

66. Տասնվեցից մինչև տասնութ տարին լրանալը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձանց նկատմամբ ազատազրկումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել տասը տարին:

67. Ըստ դատավճիռների համակցության՝ ազատազրկման ձևով նշանակվող վերջնական պատիժը չի կարող գերազանցել տասներկու տարին:

68. Առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը դատարանի կողմից կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե դատարանը գտնի, որ նրա ուղղվելը հնարավոր է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ:

69. Անչափահասի նկատմամբ դատարանը կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի հետևյալ միջոցները՝

1) նախազգուշացում, ծնողների կամ օրինական ներկայացուցիչների կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելն առավելագույնը վեց ամիս ժամկետով,

2) Խնամակալության և հոգաբարձության մարմնի միջնորդությամբ դատարանը երեխայի նկատմամբ կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ: Երեխայի նկատմամբ կարող է միաժամանակ նշանակվել դաստիարակչական բնույթի հարկադրանքի մի քանի միջոց, օրինակ ազատ ժամանակի սահմանափակում, զվարճանքների, խաղերի ժամանակի սահմանափակում, նախազգուշացում, հսկողության հանձնում և այլն,

3) Անչափահասին հսկողության հանձնելը ծնողների կամ օրինական ներկայացուցչի կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի վրա երեխայի նկատմամբ դաստիարակչական ներգործության և նրա վարքագծի նկատմամբ վերահսկողության պարտականություն դնելն է:

70. Եթե անչափահասը դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցից պարբերաբար խուսափում է, ապա խնամակալության և հոգաբարձության մարմնի կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ նյութերն ուղարկվում են դատարան՝ նշանակված միջոցը վերացնելու և անչափահասին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար:

71. Ժամանցի ազատության սահմանափակումը և անչափահասի վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումը կարող են նախատեսել որոշակի վայրեր այցելելու, ժամանցի որոշակի ձևերի, այդ թվում՝ մեխանիկական տրանսպորտային միջոցներ վարելու հետ կապված արգելք, օրվա որոշակի ժամերից հետո տանից դուրս գտնվելու, առանց խնամակալության և հոգաբարձության մարմնի համաձայնության այլ վայրեր ուղևորվելու իրավունքի սահմանափակում: Անչափահասին կարող է նաև ուսումնական հաստատություն

վերադառնալու կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի միջնորդությամբ աշխատանքի տեղավորվելու պահանջ ներկայացվել:

72. Նոր հանցանք կատարելիս անչափահասը քրեական պատասխանատվության ենթակա չէ նախկին հանցագործության համար, եթե վերջինիս կապակցությամբ նրա նկատմամբ կիրառվել է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց:

73. Տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը: Տուժող ճանաչելու մասին որոշումն ընդունում է հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը:

74. Քաղաքացիական հայցվոր է ճանաչվում քրեական գործով վարույթի ընթացքում հայց ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նրան քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառվել է քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնաս:

75. Քաղաքացիական հայցվոր ճանաչելու մասին որոշումն ընդունում են հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը:

76. Կասկածյալ է այն անձը՝ որը ձերբակալվել է հանցանք կատարելու մեջ կասկածվելու պատճառով և որի նկատմամբ մինչև մեղադրանք առաջադրելը խափանման միջոց ընտրելու մասին որոշում է կայացված: Քրեական հետապնդման մարմինն իրավունք չունի կասկածյալի վիճակում ձերբակալվածին պահել 72 ժամից ավելի, իսկ անազատության մեջ պահելու հետ չկապված խափանման միջոց կիրառելիս ոչ ավելի, քան 7 օր խափանման միջոց ընտրելու մասին որոշումը նրան հայտարարելու պահից:

77. Մեղադրյալ է այն անձը, որի նկատմամբ որոշում է կայացված որպես մեղադրյալ ներգրավելու մասին: Մեղադրյալը, որի վերաբերյալ գործը նշանակված է դատական քննության, կոչվում է ամբաստանյալ: Մեղադրյալը, որի վերաբերյալ կա օրինական ուժի մեջ մտած դատարանի դատավճիռ, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն մեղադրական է, կոչվում է դատապարտյալ, իսկ եթե դատավճիռն ամբողջությամբ արդարացման է՝ արդարացված:

78. Խնամակալության և հոգաբարձության մարմինը հաշվառում է անչափահաս տուժողին, քաղաքացիական հայցվորին, կասկածյալին, մեղադրյալին:

79. Խնամակալության և հոգաբարձության մարմինը յուրաքանչյուր դեպքի համար պետք է ունենա հաշվառման մատյան, որտեղ նշված կլինեն երեխայի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, հասցեն, փաստացի գտնվելու վայրը, ծնողների կամ օրինական ներկայացուցիչների մասին տվյալներ, եթե կա դատարանի վճիռ, ապա համառոտ նկարագիրը, երեխայի հետ կապված հետագա աշխատանքների նկարագիրը: Եթե երեխան շարունակելու է մնալ համայնքում, ապա նրա նկատմամբ հսկողության նշանակման ամսաթիվը, երեխայի խնդրով զբաղվող այլ կառույցների մասին տվյալներ, գործի հետագա ընթացքի մասին տվյալներ: Եթե երեխան տեղափոխվում է խնամքի և պաշտպանության, սոցիալական վերականգնողական

կամ անչափահասների քրեակատարողական հիմնարկ, ապա խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը պարտավոր է հետևել երեխայի կյանքի ընթացքին, նրա իրավունքների պաշտպանությանը, ինչպես նաև դիտարկել հնարավորություններ՝ հետագայում նրան համայնք ընդունելու համար: Եթե երեխան ունի գույք, սեփականություն խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը պետք է ի գիտություն ունենա այդ հանգամանքները՝ հետագայում երեխային համայնքում վերաինտեգրելու համար:

13. Խնամակալության և հոգաբարձության մարմնի մասնակցությունը երեխաների աշխատանքային հարաբերություններին

80. Տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անձինք կարող են աշխատող համարվել ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ՝ աշխատանքային պայմանագրով: Տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անձինք կարող են ընդգրկվել միայն նրանց առողջությանը, անվտանգությանը, կրթությանը և բարոյականությանը չվնասող ժամանակավոր աշխատանքներում: Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անձինք չեն կարող ընդգրկվել աշխատանքի հանգստյան, ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին, բացառությամբ մարզական և մշակութային միջոցառումներին մասնակցելու դեպքերի:

81. Տասնչորսից մինչև 16 տարեկան անձանց հետ կնքվում է ժամանակավոր աշխատանքային պայմանագիր: Եթե աշխատողը մինչև տասնվեց տարեկան է, ապա աշխատանքային պայմանագիրը կնքվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվությամբ: Այդ պայմանագիրը կարող է լուծվել ծնողներից մեկի, օրինական ներկայացուցիչների, նրա առողջության նկատմամբ հսկողություն իրականացնող բժիշկի կամ աշխատանքի պետական տեսուչի պահանջով:

82. Համաձայն ՀՀ <Աշխատանքային օրենսգրքի> աշխատանքային պայմանագիր կնքելիս պետք է հաշվի առնել, որ աշխատաժամանակի կրճատ տևողություն սահմանվում է՝

1) տասնչորսից մինչև տասնվեց տարեկան աշխատողների համար՝ շաբաթական 24 ժամ,

2) տասնվեցից մինչև տասնութ տարեկանների համար՝ շաբաթական 36 ժամ

83. Մինչև 18 տարեկան անձինք արտաժամյա աշխատանքներում չեն ներգրավվում:

84. Մինչև տասնութ տարեկան աշխատողներին անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալուց հետո իրենց խնդրանքով կարող է ամենամսյա արձակուրդ տրամադրվել: Աշխատանքային պայմագիր կնքելիս պետք է անպայման նշվի, որ մինչև տասնութ տարեկան աշխատողին արգելվում է միայնակ ուղարկել գործուղման:

85. Խնամակալության և հոգաբարձության մարմինը անչափահասի ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ ընդունում են որոշում անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու (էմանսիպացիա) մասին, քննարկում է 16 տարեկանների գործունակության դեպքերը:

86. Իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (քաղաքացիական գործունակություն) լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից: Տասնվեց տարին լրացած անչափահասը կարող է լրիվ գործունակ ճանաչվել, եթե նա աշխատում է աշխատանքային պայմանագրով կամ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ: Անչափահասին լրիվ գործունակ ճանաչելը (էմանսիպացիա) կատարվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշման հիման վրա՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի վճռով:

87. Ծնողները, որդեգրողները և հոգաբարձուն պատասխանատվություն չեն կրում լրիվ գործունակ ճանաչված անչափահասի պարտավորությունների, մասնավորապես նրա կողմից պատճառված վնասի հետևանքով առաջացած պարտավորությունների համար: Այդ պատճառով, պետք է Խնամակալության և հոգաբարձության մարմինը բավականաչափ իրազեկված լինի խնդրի էությանը, ինչպես նաև ըստ անհրաժեշտության, կարողանա ներգրավել մասնագետներ /հոգեբան, մանկավարժ/ իրավիճակը ճիշտ գնահատելու համար:

88. Այն դեպքում, երբ օրենքով թույլատրվում է ամուսնանալ մինչև տասնութ տարեկան դառնալը, քաղաքացին լրիվ ծավալով գործունակություն է ձեռք բերում ամուսնանալու պահից: Ամուսնության հետևանքով ձեռք բերված գործունակությունը լրիվ ծավալով պահպանվում է նաև մինչև տասնութ տարեկան դառնալն ամուսնալուծվելուց հետո: Ամուսնությունն անվավեր ճանաչելիս՝ դատարանը կարող է վճիռ կայացնել դատարանի կողմից որոշված պահից անչափահաս ամուսնու գործունակության լրիվ կորստյան մասին: